

**Համաձայնագիր
Հայաստանի Հանրապետության Կառավարության և
Տաջիկստանի Հանրապետության Կառավարության միջև
օդային հաղորդակցության մասին**

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Տաջիկստանի Հանրապետության Կառավարությունը, այսուհետև՝ Պայմանավորվող կողմեր,
հանդիսանալով «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» Կոնվենցիայի մասնակիցներ, որն ստորագրման համար բացվել է Չիկագոյում 1944 թվականի դեկտեմբերի 7-ին,
ի լրումն նշված Կոնվենցիայի՝ ցանկանալով կնքել Համաձայնագիր՝ իրենց պետությունների համապատասխան տարածքների միջև և դրանց սահմաններից դուրս կանոնավոր օդային հաղորդակցություն հաստատելու նպատակով,
համաձայնեցին ներքոնշյալի մասին.

**Հոդված 1
Սահմանումներ**

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար, եթե համատեքստից այլ բան չի ենթադրվում.

ա) «Կոնվենցիա» հասկացությունը նշանակում է՝ «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» Կոնվենցիա, որն ստորագրման համար բացվել է Չիկագոյում 1944 թվականի դեկտեմբերի 7-ին, ինչպես նաև՝ Կոնվենցիայի 90-րդ հոդվածին համապատասխան ընդունված ցանկացած հավելված և հավելվածների կամ Կոնվենցիայի ցանկացած փոփոխություն, որոնք ընդունվել են Կոնվենցիայի 90-րդ և 94-րդ հոդվածներին համապատասխան, եթե այդ հավելվածները և փոփոխություններն ընդունվել կամ վավերացվել են երկու Պայմանավորվող կողմերի կողմից,

բ) «ավիացիոն իշխանություններ» հասկացությունը նշանակում է՝ Հայաստանի Հանրապետության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն, իսկ Տաջիկստանի Հանրապետության դեպքում՝ Տաջիկստանի Հանրապետության տրանսպորտի նախարարություն, կամ՝ ցանկացած այլ անձ կամ կազմակերպություն, որոնք լիազորված կլինեն իրականացնելու նշված մարմինների կողմից ներկայումս իրականացվող գործառնությունները,

գ) «նշանակված ավիաընկերություն» հասկացությունը նշանակում է՝ ցանկացած ավիաձեռնարկություն, որին մի Պայմանավորվող կողմը նշանակել է՝ այդ մասին գրավոր ծանուցելով մյուս Պայմանավորվող կողմին, և լիազորել է սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածին համապատասխան:

դ) «սակագին» հասկացությունը նշանակում է՝ ուղևորների, ուղեբեռի և բեռի փոխադրման համար վճարվող գներ և այն պայմանները, որոնց դեպքում կիրառվում են այդ գները, ներառյալ կոմիսիոն վճարները և այլ լրացուցիչ վճարումները գործակալական ծառայությունների կամ տրանսպորտային փաստաթղթերի վաճառքի համար, բացառությամբ փոստի փոխադրման համար վճարների և պայմանների,

ե) «Համաձայնագիր» հասկացությունը նշանակում է՝ սույն Համաձայնագիրը, դրա հավելվածը և Համաձայնագրի կամ հավելվածի ցանկացած փոփոխություն,

զ) «տարածք» հասկացությունը պետության առնչությամբ նշանակում է՝ տվյալ պետության ինքնիշխանության տակ գտնվող ցամաքային տարածքներ, տարածքային և ներքին ջրեր և դրանց վրայի օդային տարածք,

է) «միջազգային օդային հաղորդակցություն» հասկացությունը նշանակում է՝ օդային հաղորդակցություն, որն իրականացվում է մեկից ավելի պետությունների օդային տարածքներով,

ը) «վայրէջք ոչ առևտրային նպատակներով» հասկացությունը նշանակում է՝ վայրէջք ցանկացած այլ նպատակով՝ բացի ուղևորներ, ուղեբեռ, բեռ կամ փոստ օդանավ վերցնելուց կամ օդանավից իջեցնելուց:

Հոդված 2

Փոխադրումների իրավունքների տրամադրում

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմին տրամադրում է սույն Համաձայնագրով նախատեսված իրավունքներ՝ սույն Համաձայնագրի հավելվածով սահմանված երթուղիներով միջազգային օդային հաղորդակցություններ հաստատելու նպատակով (այսուհետև, համապատասխանաբար՝ «համաձայնեցված հաղորդակցություններ» և «սահմանված երթուղիներ»):

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերությունը սահմանված երթուղիներում համաձայնեցված հաղորդակցությունները շահագործելիս կօգտվի հետևյալ իրավունքներից.

ա) իրականացնել առանց վայրէջքի թռիչք մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքի վրայով,

բ) վայրէջք կատարել մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում ոչ առևտրային նպատակներով սույն Համաձայնագրի հավելվածով սահմանված կետերում,

գ) վայրէջք կատարել մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում սույն Համաձայնագրի հավելվածով սահմանված կետերում՝ Պայմանավորվող կողմերի պետությունների տարածքների միջև մեկնող ուղևորներ, ուղեբեռ, բեռ կամ փոստ՝ առանձին կամ համակցված, օդանավ վերցնելու և/կամ իջեցնելու նպատակով,

3. Սույն հոդվածում ոչինչ չպետք է դիտվի որպես մի Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությանը մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում գտնվող կետերի միջև վճարմամբ կամ վարձակալմամբ փոխադրելու նպատակով ուղևորներ, փոստ և բեռ՝ առանձին կամ համակցված, օդանավ վերցնելու իրավունքի տրամադրում:

Հոդված 3

Լիազորություններ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի նշանակելու ավիաընկերություն/ներ սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցությունների շահագործման նպատակով, ինչպես նաև չեղարկելու կամ փոխարինելու նշանակված ավիաընկերություն(ներ)ը այլ ավիաընկերությամբ/ավիաընկերություններով՝ այդ մասին դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցելով մյուս Պայմանավորվող կողմին:

2. Նման ծանուցում ստանալուն պես մյուս Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունները, սույն հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի դրույթներին

համապատասխան, յուրաքանչյուր նշանակված ավիաընկերության անմիջապես տրամադրում են թռիչքների կատարման համապատասխան թույլտվություն:

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունից կարող է պահանջել ապացույցներ այն մասին, որ նա ի վիճակի է կատարելու այդ Պայմանավորվող կողմի պետության կողմից սովորաբար և հիմնավորված կերպով կիրառվող օրենքներով և կանոններով նախատեսված պայմանները՝ Կոնվենցիայի դրույթներին համապատասխան միջազգային օդային հաղորդակցությունները շահագործելիս:

4. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի մերժելու սույն հոդվածի 2-րդ կետում նշված՝ թռիչքի թույլտվության տրամադրումը կամ պահանջելու կատարել այնպիսի պայմաններ, որոնք ինքն անհրաժեշտ կհամարի նշանակված ավիաընկերության կողմից սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածում նշված իրավունքներից օգտվելու համար՝ ցանկացած դեպքում, երբ վերոնշյալ Պայմանավորվող կողմը չունի ապացույցներ, որ այդ ավիաընկերության առավելապես տիրապետման կամ դրա նկատմամբ իրական հսկողության իրավունքը պատկանում են այդ ավիաընկերությանը նշանակած Պայմանավորվող կողմին կամ նրա պետության քաղաքացիներին:

5. Նշանակված և դրա հիման վրա թույլտվություն ստացած ավիաընկերությունը կարող է ցանկացած ժամանակ սկսել համաձայնեցված հաղորդակցությունների շահագործումը՝ պայմանով, որ դա համապատասխանում է սույն Համաձայնագրի դրույթներին:

Հոդված 4

Չեղարկումը և տրամադրված իրավունքների գործողության դադարեցումը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի չեղարկել շահագործման թույլտվությունը կամ ժամանակավորապես դադարեցնել սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածով նախատեսված այն իրավունքները, որոնք տրվել են մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությանը, կամ պահանջելու այնպիսի պայմանների կատարում, որոնք նա անհրաժեշտ կհամարի այդ իրավունքներից օգտվելու ժամանակ՝ հետևյալ դեպքերում.

ա) եթե նա համոզված չէ, որ այդ ավիաընկերության առավելապես տիրապետման կամ նրա նկատմամբ իրական հսկողության իրավունքը պատկանում են այդ ավիաընկերությանը նշանակած Պայմանավորվող կողմին կամ դրա պետության քաղաքացիներին,

բ) եթե այդ ավիաընկերությունը չի պահպանում այն Պայմանավորվող կողմի պետության օրենքներն ու կանոնները, որը տրամադրել է այդ իրավունքները,

գ) եթե ավիաընկերությունը որևէ այլ կերպ չի պահպանում սույն Համաձայնագրով սահմանված պայմանները:

2. Եթե թույլտվությունը անհապաղ չեղարկելը, իրավունքների դադարեցումը կամ սույն հոդվածի 1-ին կետում նշված պայմանները կատարելու պահանջը անհրաժեշտ չեն օրենքների ու կանոնների հետագա խախտումները կանխելու համար, ապա այդ իրավունքից կօգտվեն միայն Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների միջև խորհրդակցություններից հետո: Այդպիսի խորհրդակցությունները պետք է տեղի ունենան խորհրդակցություններ անցկացնելու հարցում ստանալու օրվանից 60 (վաթսույն) օրվա ընթացքում, եթե Պայմանավորվող կողմերի միջև չլինի այլ պայմանավորվածություն:

Հոդված 5

Օրենքների, կանոնների և ընթացակարգերի կիրառում

1. Մի Պայմանավորվող կողմի պետության օրենքները, կանոնները և ընթացակարգերը, որոնք կարգավորում են միջազգային օդային հաղորդակցություններ իրականացնող օդանավերի իր պետության տարածք ժամանելը, այնտեղ գտնվելը և այնտեղից մեկնումը կամ այդ օդանավերի շահագործումը և նավիգացիան, կկիրառվեն մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունների օդանավերի նկատմամբ:

2. Մի Պայմանավորվող կողմի պետության միջազգային օդային հաղորդակցություններին վերաբերող օրենքները, կանոնները և ընթացակարգերը, որոնք կարգավորում են ուղևորների, անձնակազմի, ուղեբեռի, բեռի կամ փոստի՝ իր պետության տարածք մուտք գործելը, այնտեղ գտնվելը և այնտեղից մեկնումը և, մասնավորապես, վերաբերում են մաքսային, արժույթային և սանիտարական կանոններին, երկիր մուտք գործելու, այնտեղից մեկնելու, էմիգրացիոն և իմիգրացիոն, ավիացիոն անվտանգությանն առնչվող ձևակերպումներին, կկիրառվեն մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունների օդանավերով փոխադրվող ուղևորների, անձնակազմի, ուղեբեռի, բեռի կամ փոստի նկատմամբ իր պետության տարածքում գտնվելու ընթացքում:

3. Պայմանավորվող կողմերից ոչ մեկը սույն հոդվածով նախատեսված օրենքները և կանոնները կիրառելիս չի կարող իր նշանակված ավիաընկերությանը տրամադրել մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերության նկատմամբ արտոնյալ իրավունք:

Հոդված 6

Համաձայնեցված հաղորդակցությունների շահագործման կարգավորումը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ երկու Պայմանավորվող կողմերի նշանակված ավիաընկերություններին տրամադրում է համապատասխան տարածքների միջև սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցությունների շահագործման արդար և հավասար պայմաններ:

2. Համաձայնեցված հաղորդակցությունների շահագործումն իրականացնելիս մի Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունը պետք է հաշվի առնի մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերության շահերն այնպես, որ վնաս չհասցնի այն ավիաընկերության փոխադրումներին, որը շահագործում է նույն համաձայնեցված հաղորդակցությունը այդ նույն երթուղով կամ դրա մի մասով:

3. Պայմանավորվող կողմերի նշանակված ավիաընկերությունների կողմից սպասարկվող համաձայնեցված հաղորդակցությունները պետք է համապատասխանեն սահմանված երթուղիներով իրականացվող փոխադրումներին ներկայացվող հանրային պահանջներին, և յուրաքանչյուր ավիաընկերություն պետք է առաջնային նպատակ ունենա տրամադրելու այնպիսի ծավալ, որն օդանավի բեռնման ողջամիտ ցուցանիշի դեպքում կբավարարի Պայմանավորվող կողմերի պետությունների տարածքների միջև ուղևորների, բեռի և փոստի փոխադրումների՝ համապատասխան և ողջամտորեն առաջարկվող պահանջներին:

Հոդված 7

Հավաստագրերի և վկայականների ձևաչափը

1. Թռիչքների համար պիտանիության վկայականները, որակավորման վկայականները և հավաստագրերը, որոնք տրվել են Պայմանավորվող կողմերից մեկի կողմից և վավեր են այդ Պայմանավորվող կողմի պետության տարածքում, վավեր են ճանաչվում յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի համար՝ համաձայնեցված հաղորդակցությունների շահագործման նպատակով՝ պայմանով, որ այն պահանջները, որոնց համապատասխան տրվել են այդպիսի վկայականները և հավաստագրերը համապատասխանում են Կոնվենցիային համապատասխան սահմանված նվազագույն ստանդարտներին կամ գերազանցում են դրանք:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, այնուամենայնիվ, իրեն իրավունք է վերապահում՝ հրաժարվելու ճանաչել իր պետության տարածքի վրայով թռիչք կատարելու կամ իր պետության տարածքում վայրէջք կատարելու նպատակով մյուս Պայմանավորվող կողմի կողմից իր քաղաքացիներին տրամադրված որակավորման հավաստագրերը և վկայականները:

Հոդված 8

Մաքսատուրքերից և այլ հարկերից ազատելը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունների կողմից միջազգային փոխադրումների համար օգտագործվող օդանավերը, ինչպես նաև դրանց մշտական սարքավորումները, պահեստամասերը, ներառյալ շարժիչները, վառելիքի պաշարները, քսայուղերը և օդանավի պաշարները (այդ թվում՝ սննդամթերքը, խմիչքը), որոնք գտնվում են այդ օդանավերում, մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածք ժամանելուց կազատվեն բոլոր մաքսատուրքերից, ստուգման վճարներից և այլ տուրքերից ու հարկերից՝ պայմանով, որ այդ սարքավորումները և պաշարները կմնան օդանավում մինչև այդ Պայմանավորվող կողմի պետության տարածքից մեկնելու պահը:

2. Այդպիսի մաքսատուրքերից, վճարներից և հարկերից, բացի մատուցված ծառայությունների դիմաց վճարներից, ազատվում են նաև.

ա) օդանավի պաշարները, որոնք օդանավ են վերցվել մի Պայմանավորվող կողմի պետության տարածքում այդ Պայմանավորվող կողմի համապատասխան իշխանությունների կողմից սահմանված ծավալով, և նախատեսված են մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերության կողմից՝ համաձայնեցված հաղորդակցություններով շահագործվող օդանավում օգտագործելու համար,

բ) պահեստամասերը, որոնք բերվել են մի Պայմանավորվող կողմի պետության տարածք մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերության կողմից՝ համաձայնեցված հաղորդակցություններով շահագործվող օդանավի տեխնիկական սպասարկման կամ վերանորոգման համար,

գ) վառելիքը և քսայուղերը, որոնք մի Պայմանավորվող կողմի պետության տարածք են բերվել մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերության՝ սահմանված երթուղիներով թռիչքներ կատարող օդանավի համար՝ նույնիսկ, եթե այդ պաշարները պետք է օգտագործվեն այն Պայմանավորվող կողմի պետության տարածքի սահմաններով անցնող երթուղու հատվածում, որտեղ դրանք վերցվել են օդանավ:

Սույն կետի «ա», «բ» և «գ» ենթակետերում նշված նյութերը, ըստ պահանջի, կարող են դրվել մաքսային հսկողության տակ:

3. Օդանավի մշտական սարքավորումները, ինչպես նաև մի Պայմանավորվող կողմի օդանավերում գտնվող նյութերն ու պաշարները կարող են բեռնաթափվել մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում միայն այդ Պայմանավորվող կողմի մաքսային իշխանությունների թույլտվությամբ: Այդ դեպքում դրանք կարող են թողնվել

նշված իշխանությունների հսկողության տակ այնքան ժամանակ, քանի դեռ դրանք հետ չեն տարվել կամ, մաքսային կանոններին համապատասխան, այլ նշանակություն չեն ստացել:

Հոդված 9 Թռիչքների չվացուցակի հաստատումը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերություն պետք է ոչ ուշ, քան թռիչքները սկսելուց 45 (քառասունհինգ) օր առաջ մյուս Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունների հաստատմանը ներկայացնի նախատեսվող չվացուցակը՝ նշելով չվերթերի հաճախականությունը, օդանավի տեսակը, ժամանակը, տեղերի տեղաբաշխվածությունը և քանակը, ինչպես նաև չվացուցակի գործողության ժամկետը: Որոշ դեպքերում այդ ժամկետը կարող է կրճատվել Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների միջև ձեռք բերված համաձայնությամբ:

2. Մի Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերության հաստատված չվացուցակի ցանկացած հետագա փոփոխություն պետք է ներկայացվի մյուս Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունների հաստատմանը:

3. Եթե նշանակված ավիաընկերությունը ցանկանում է չվացուցակում նշվածներից զատ կատարել հավելյալ չվերթեր, ապա նա պետք է հայցի մյուս Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունների թույլտվությունը: Նման հարցումը պետք է ներկայացվի այդ չվերթերը կատարելուց առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Հոդված 10 Ուղիղ տարանցիկ փոխադրումներ

Ուղևորները, ուղեբեռը և բեռը, որոնք փոխադրվում են ուղիղ տարանցմամբ մի Պայմանավորվող կողմի պետության տարածքով և չեն լքում օդանավակայանի՝ այդ նպատակի համար նախատեսված՝ տարանցիկ, ստերիլ գոտին, կենթարկվեն միայն պարզեցված հսկողության: Ուղիղ տարանցմամբ փոխադրման դեպքում ուղեբեռը և բեռը պետք է ազատվեն մաքսատուրքերից և նմանատիպ այլ հարկերից:

Հոդված 11 Թռիչքների անվտանգությունը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ցանկացած ժամանակ կարող է պահանջել խորհրդակցությունների անցկացում մյուս Պայմանավորվող կողմի կողմից ընդունված թռիչքային անձնակազմերին, օդանավերին կամ դրանց շահագործմանը առնչվող ցանկացած բնագավառում թռիչքային անվտանգության չափանիշների վերաբերյալ: Այդպիսի խորհրդակցությունները պետք է տեղի ունենան նման հարցում ստանալու օրվանից 30 (երեսուն) օրվա ընթացքում:

2. Եթե նման խորհրդակցության արդյունքում մի Պայմանավորվող կողմը գտնում է, որ մյուս Պայմանավորվող կողմը պատշաճ ձևով չի պահպանում կամ կիրառում նշված բնագավառներից յուրաքանչյուրում թռիչքային անվտանգության չափանիշները, որոնք առնվազն համապատասխանում են այդ պահին Կոնվենցիային համապատասխան հաստատված նվազագույն չափանիշներին, ապա առաջին Պայմանավորվող կողմը մյուս Պայմանավորվող կողմին պետք է ծանուցի այդպիսի

եզրակացությունների և այն գործողությունների մասին, որոնք անհրաժեշտ են ձեռնարկել այդ նվազագույն չափանիշներին համապատասխանեցնելու համար, և որ մյուս Պայմանավորվող կողմը պետք է ձեռնարկի համապատասխան միջոցներ: Այն դեպքում, եթե մյուս Պայմանավորվող կողմը չի ձեռնարկում համապատասխան անհրաժեշտ միջոցներ 15 (տասնհինգ) օրվա ընթացքում կամ ավելի երկար ժամանակահատվածում, որը կարող է համաձայնեցված լինել, դա պետք է հիմք լինի սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի կիրառման համար:

3. Անկախ Կոնվենցիայի 33-րդ հոդվածով նախատեսված պարտավորություններից, համաձայնեցված է, որ մի Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերության անունից շահագործվող կամ վարձակալված ցանկացած օդանավ դեպի մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածք կամ պետության տարածքից թռիչքներ կատարելու համար մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում գտնվելիս կարող է ստուգման ենթարկվել այդ Պայմանավորվող կողմի լիազորված ներկայացուցիչների կողմից՝ օդանավում կամ օդանավի շրջակայքում, օդանավի և դրա անձնակազմի փաստաթղթերի իսկությունը, օդանավի և դրա սարքավորումների վիճակը ստուգելու նպատակով (սույն հոդվածում՝ «կառավարողացային տեսչական ստուգում»)՝ պայմանով, որ այն չի հանգեցնի չվերթի անհիմն հետաձգման:

4. Եթե նման ստուգումը կամ մի շարք ստուգումները ի հայտ են բերում.

ա) լուրջ հիմքեր, որ օդանավը կամ օդանավի շահագործումը չի համապատասխանում տվյալ պահին Կոնվենցիային համապատասխան սահմանված նվազագույն չափանիշներին, կամ

բ) լուրջ հիմքեր այն մասին, որ բացակայում են տվյալ պահին Կոնվենցիային համապատասխան սահմանված՝ բավարար տեխնիկական սպասարկման և թռիչքների անվտանգության չափանիշների պահպանումը,

ապա Կոնվենցիայի 33-րդ հոդվածի համաձայն տեսչական ստուգումն իրականացնող Պայմանավորվող կողմն իրավունք ունի տալու եզրակացություն, որ այն պահանջները, որոնց համաձայն օդանավին կամ այդ օդանավի անձնակազմին տրվել են հավաստագրերը կամ վկայագրերը, որոնց հիման վրա դրանք վավեր են ճանաչվել, կամ այն պահանջները, որոնց համաձայն տվյալ օդանավը շահագործվում է, չեն համապատասխանում Կոնվենցիայի համաձայն սահմանված նվազագույն չափանիշներին:

5. Այն դեպքում, երբ, սույն հոդվածի 3-րդ կետի համաձայն, մի Պայմանավորվող կողմի ավիաընկերության կողմից կամ նրա անունից շահագործվող օդանավի կառավարողացային տեսչական ստուգումը տվյալ ավիաընկերության ներկայացուցիչների կողմից արգելվում է, մյուս Պայմանավորվող կողմն իրավունք ունի ենթադրելու, որ կան լուրջ թերություններ, որոնք նկարագրված են սույն հոդվածի 4-րդ կետում, և հանգել եզրակացության՝ այդ կետի համաձայն:

6. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրեն իրավունք է վերապահում անմիջապես դադարեցնելու կամ փոփոխելու մյուս Պայմանավորվող կողմի ավիաընկերությանը տրված շահագործման թույլտվությունը, եթե առաջին Պայմանավորվող կողմը տեսչական ստուգման, ստուգումների շարքի, տեսչական ստուգման անցկացումը չթույլատրելու, խորհրդակցության արդյունքում կամ այլ պատճառով եզրակացնում է, որ անհրաժեշտ է ձեռնարկել անհապաղ միջոցներ, որոնք կարևոր են ավիաընկերության անվտանգ թռիչքների համար:

7. Պայմանավորվող կողմերից մեկի կողմից սույն հոդվածի 3-րդ և 6-րդ կետերի համաձայն նախաձեռնվող ցանկացած գործողություն պետք է անհապաղ դադարեցվի, հենց վերանան նման գործողությունների ընդունման հիմքերը:

Հոդված 12 **Ավիացիոն անվտանգություն**

1. Միջազգային իրավունքով նախատեսված իրենց իրավունքների և պարտավորությունների համաձայն՝ Պայմանավորվող կողմերը հաստատում են անօրինական միջամտության գործողություններից քաղաքացիական ավիացիայի անվտանգությունն ապահովելու՝ միմյանց նկատմամբ իրենց ստանձնած պարտավորությունը: Առանց սահմանափակելու միջազգային իրավունքով նախատեսված իրենց պետությունների ստանձնած իրավունքների և պարտավորությունների ընդհանուր կիրառելիությունը՝ Պայմանավորվող կողմերը կգործեն 1963 թվականի սեպտեմբերի 14-ին Տոկիոյում ստորագրված՝ «Օդանավում կատարվող հանցագործությունների և որոշակի այլ գործողությունների մասին» կոնվենցիայի, 1970 թվականի դեկտեմբերի 16-ին Հաագայում ստորագրված՝ «Օդանավի անօրինական զավթման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի, 1971 թվականի սեպտեմբերի 23-ին Մոնրեալում ստորագրված՝ «Քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ապօրինի գործողությունների դեմ պայքարի մասին» կոնվենցիայի, 1971 թվականի սեպտեմբերի 23-ի՝ «Քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված ապօրինի գործողությունների դեմ պայքարի մասին» կոնվենցիան լրացնող՝ «Միջազգային քաղաքացիական ավիացիան սպասարկող օդանավակայաններում բռնության ապօրինի գործողությունների դեմ պայքարի մասին» 1988 թվականի փետրվարի 24-ին Մոնրեալում ստորագրված արձանագրության, 1991 թվականի մարտի 1-ին Մոնրեալում ստորագրված՝ «Պլաստիկ պայթուցիկ նյութերի հայտնաբերման նպատակով դրանց դրոշմադրման մասին» կոնվենցիայի դրույթների, ինչպես նաև ավիացիոն անվտանգության ոլորտում այլ միջազգային կոնվենցիաների ու արձանագրությունների դրույթների համաձայն, որոնց շրջանակներում Պայմանավորվող կողմերը համագործակցում են:

2. Պայմանավորվող կողմերը մյուս Պայմանավորվող կողմի խնդրանքով միմյանց ցուցաբերում են ողջ անհրաժեշտ աջակցությունը՝ կանխելու համար քաղաքացիական օդանավերի ապօրինի գրավման գործողությունները և օդանավերի, դրանց ուղևորների և անձնակազմերի, օդանավակայանների և աերոնավիգացիոն սարքավորումների անվտանգության դեմ ուղղված այլ անօրինական գործողությունները, ինչպես նաև քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված ցանկացած այլ սպառնալիք:

3. Պայմանավորվող կողմերը գործում են Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության կողմից սահմանված և միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին Կոնվենցիայի հավելվածներ համարվող՝ ավիացիոն անվտանգության դրույթներին և տեխնիկական պահանջներին համապատասխան՝ այնքանով, որքանով անվտանգության այդպիսի դրույթները կիրառելի են Պայմանավորվող կողմերի նկատմամբ. նրանք կպահանջեն, որ օդանավերն սպասարկող անձնակազմերը, որոնց գործունեության հիմնական վայրը կամ մշտական գտնվելու վայրն իրենց պետության տարածքն է, և իրենց պետության տարածքներում միջազգային օդանավակայանների սպասարկող անձնակազմերը գործեն ավիացիոն անվտանգության այդ դրույթներին համապատասխան:

4. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ համաձայնում է, որ մյուս Պայմանավորվող կողմը կարող է օդանավերի սպասարկող անձնակազմերից պահանջել պահպանել սույն հոդվածի 3-րդ կետում նշված ավիացիոն անվտանգության դրույթները և պահանջները, որոնք այդ Պայմանավորվող կողմը նախատեսում է իր տարածք մուտք գործելու, այնտեղից մեկնելու և տարածքի սահմաններում գտնվելու ընթացքում: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր

պետության տարածքում օդանավի բեռնման կամ ուղևորների նստեցման ընթացքում և դրանից առաջ պետք է ապահովի, որ արդյունավետորեն կիրառվեն պատշաճ միջոցներ օդանավերի պաշտպանության և ուղևորների, անձնակազմի, ուղեբեռի, բեռի և օդանավի պաշարների ստուգման համար: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ բարյացակամորեն քննության է առնում մյուս Պայմանավորվող կողմի ցանկացած խնդրանք, որը վերաբերում է անվտանգության հատուկ միջոցների կիրառմանը որոշակի սպառնալիքի դեպքում:

5. Երբ տեղի է ունենում քաղաքացիական օդանավի անօրինական զավթման կամ օդանավերի, դրանց ուղևորների և անձնակազմի, օդանավակայանների կամ աներոնավիագացիոն միջոցների անվտանգության դեմ ուղղված այլ անօրինական գործողությունների հետ կապված միջադեպ կամ միջադեպի սպառնալիք, Պայմանավորվող կողմերը միմյանց օգնություն են ցուցաբերում՝ դյուրացնելով հաղորդակցությունն ու ձեռնարկելով այլ համապատասխան միջոցներ՝ նման միջադեպը կամ դրա սպառնալիքն արագ ու անվտանգ վերացնելու համար:

6. Եթե Պայմանավորվող կողմերից մեկը չի կատարում սույն հոդվածով նշված ավիացիոն անվտանգության դրույթները, ապա մյուս Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունները կարող են պահանջել անհապաղ խորհրդակցություններ տվյալ Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունների հետ:

Հոդված 13 Սակագներ

1. Ցանկացած համաձայնեցված հաղորդակցությունում սակագները պետք է սահմանվեն՝ հաշվի առնելով բոլոր համապատասխան գործոնները, ներառյալ շահագործման ծախսերը, շահույթը և սահմանված երթուղու ցանկացած հատվածի համար այլ ավիաընկերությունների սակագները: Այդ սակագները պետք է սահմանվեն սույն հոդվածում ներքոնշյալ պայմանների համաձայն: Պայմանավորվող կողմերը որպես անընդունելի կդիտարկեն այն սակագները, որոնք ոչ խելամիտ կերպով բարձր են կամ սահմանափակված են գերիշխող դիրքի չարաշահման պատճառով, ինչպես նաև ավիաընկերություններին այն գներից պաշտպանելու նպատակով, որոնք արհեստականորեն նվազեցված են ուղղակի կամ անուղղակի պետական սուբսիդիաների կամ օժանդակության հաշվին՝ խտրական գների և գործելակերպի կանխման, գների առունով սպառողների պաշտպանության նպատակով:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված սակագները սահմանված երթուղիներից յուրաքանչյուրի համար պետք է ըստ հնարավորության համաձայնեցվեն Պայմանավորվող կողմերի նշանակված ավիաընկերությունների միջև՝ այդ երթուղիները ամբողջովին կամ մասամբ շահագործող այլ ավիաընկերությունների հետ խորհրդակցելուց հետո: Նման համաձայնեցում, ըստ հնարավորության, ձեռք կբերվի Օդային տրանսպորտի միջազգային ընկերակացության սակագների սահմանման մեխանիզմի կիրառմամբ:

3. Եթե նշանակված ավիաընկերությունները չեն կարողանում համաձայնության գալ սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան իրենց ներկայացված որևէ սակագնի հաստատման հարցում, ապա այդ տարածայնությունը պետք է կարգավորվի սույն Համաձայնագրի 19-րդ հոդվածով սահմանված կարգով:

4. Սույն հոդվածի դրույթների համաձայն սահմանված սակագները պետք է ուժի մեջ մնան այնքան ժամանակ, քանի դեռ չեն սահմանվել նոր սակագներ: Այնուամենայնիվ, սակագնի օգտագործումը սույն կետի գործողության ուժով չի կարող երկարաձգվել ավելի քան 12 (տասներկու) ամիս այն օրվանից հետո, երբ այն համարվում է ուժը կորցրած:

Հոդված 14 **Եկամուտների փոխանցումը**

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերություններին իրավունք է վերապահում իրենց երկիր փոխանցելու և հաշվանցելու բոլոր տեղական եկամուտները, որոնց գումարը գերազանում է տեղական ծախսերը. ընդ որում՝ փոխանցումը և հաշվանցումը պետք է կատարվեն ազատ փոխարկելի արժույթով՝ Պայմանավորվող կողմերի պետությունների արժութային կարգավորման ոլորտում գործող ազգային օրենսդրությանը համապատասխան և անհապաղ, առանց սահմանափակումների, խտրականության կամ հարկման և փոխանակման պաշտոնական կուրսով, որը կիրառվում է փոխանցման և հաշվանցման պահանջը ստանալու օրը:

2. Եթե Պայմանավորվող կողմերի միջև կա առանձին համաձայնագիր եկամուտների և գույքի կրկնակի հարկումից խուսափելու վերաբերյալ, ապա գերակայում են վերջինիս դրույթները:

Հոդված 15 **Առևտրային գործունեություն**

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունները, փոխադարձության սկզբունքով և մյուս Պայմանավորվող կողմի պետության մուտքի, բնակության, զբաղվածությանը վերաբերող օրենքներին և կանոններին համապատասխան, ունեն հավասար հնարավորություններ՝ այդ մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում բացելու իրենց ներկայացուցչությունները՝ անհրաժեշտ վարչական, տեխնիկական, առևտրային և գործառնական աշխատակազմով:

2. Ներկայացուցիչները և աշխատակազմը կենթարկվեն մյուս Պայմանավորվող կողմի գործող օրենքներին և կանոններին, և այդ օրենքների և կանոնների համաձայն՝ այդ Պայմանավորվող կողմը, փոխադարձության հիման վրա և նվազագույն ուշացումով, սույն հոդվածի 1-ին կետում նշված ներկայացուցիչներին և աշխատակազմին կտրամադրի աշխատանքի, ծառայողական այցերի անհրաժեշտ թույլտվություն կամ նման այլ փաստաթղթեր:

3. Փոխադարձության սկզբունքի հիման վրա յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությանը կտրամադրի իր պետության տարածքում անմիջականորեն կամ, իր հայեցողությամբ, իր գործակալների միջոցով ավիափոխադրումների վաճառքով զբաղվելու իրավունք: Յուրաքանչյուր նշանակված ավիաընկերություն կունենա այդպիսի փոխադրումների վաճառքի իրավունք, և ցանկացած անձ կարող է ազատորեն ձեռք բերել այդ փոխադրումները տեղական կամ ազատ փոխարկելի տարադրամով:

Հոդված 16 **Գանձումներ օգտագործողներից**

1. Յուրաքանչյուր օդանավակայանի օգտագործման համար սահմանված գանձումները և այլ վճարումները՝ ներառյալ օդանավակայանի շինությունների,

տեխնիկական ու այլ սարքավորումների և ծառայությունների համար, ինչպես նաև աներոնավիզացիոն միջոցների, կապի միջոցների և ծառայությունների օգտագործման համար ցանկացած վճարում պետք է կատարվի յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի կողմից իր պետության տարածքում հաստատած դրույքաչափերի և սակագների համաձայն:

2. Այդպիսի գանձումները պետք է լինեն արդարացի և չափավոր, չպետք է ունենան չհիմնավորված խտրական բնույթ և պետք է արդարացիորեն բաշխվեն օգտագործողների տարբեր խմբերի միջև:

3. Պայմանավորվող կողմերից ոչ մեկը մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունից չի գանձում կամ չի թույլատրում նրանից գանձել ավելի բարձր օգտագործողների վճարներ, քան նմանատիպ միջազգային հաղորդակցություն իրականացնող իր սեփական ավիաընկերություններից գանձված գումարն է:

Հոդված 17

Կողերի համատեղ օգտագործում

1. Համաձայնեցված երթուղիներով օդային հաղորդակցություններ իրականացնելիս մի Պայմանավորվող կողմի ցանկացած նշանակված ավիաընկերություն կարող է պայմանավորվել տեղերի ամրագրման և կողերի համատեղ օգտագործման վերաբերյալ.

ա) Պայմանավորվող կողմերից որևէ մեկի ավիաընկերության կամ ավիաընկերությունների հետ,

բ) երրորդ կողմի ավիաընկերության կամ ավիաընկերությունների հետ: Եթե նման երրորդ կողմը չի ձանաչում համեմատելի համաձայնությունները մյուս Պայմանավորվող կողմի ավիաձեռնարկությունների և այլ ավիաընկերությունների միջև նման երրորդ կողմի պետության տարածք, տարածքից կամ տարածքով հաղորդակցություններ իրականացնելիս, ապա Պայմանավորվող կողմն իրավունք ունի չընդունելու նման համաձայնությունները:

2. Վերը նշված դրույթները, սակայն, պետք է հաշվի առնեն, որ նման համաձայնությունների շրջանակներում բոլոր ավիաընկերությունները.

ա) պահպանում են դրանց հիմքում ընկած փոխադրումների իրավունքները և սկզբունքները, որոնք նշված են սույն Համաձայնագրով, և

բ) կատարում են երկու Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների պահանջները, որոնք կիրառելի են նման համաձայնությունների նկատմամբ:

3. Կողերը համատեղ օգտագործող ավիաընկերությունները պետք է կողերի համատեղ օգտագործման և տեղերի ամրագրման մասին նախատեսվող համաձայնությունները ներկայացնեն երկու Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանություններին դրանց նախատեսվող ներդրման պահից առնվազն 45 (քառասունհինգ) օր առաջ: Կողերի համատեղ օգտագործման և տեղեր ամրագրման մասին նման համաձայնությունները պետք է արժանան երկու Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների հավանությանը:

Հոդված 18

Վերգետնյա սպասարկում

1. Թռիչքային անվտանգության վերաբերյալ կիրառելի դրույթները, ներառյալ Կոնվենցիայի 6-րդ հավելվածով նախատեսված ԻԿԱՕ-ի ստանդարտները և առաջարկվող գործելակերպը (SARPs) պահպանելու պայմանով, մի Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունը կամ ավիաընկերությունները կարող են

փոխադարձության հիման վրա մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում, ինքնուրույն իրականացնել վերգետնյա սպասարկում և իր/իրենց հայեցողությամբ ամբողջությամբ կամ մասնակի օգտվել այն մրցակցող գործակալների կողմից մատուցվող վերգետնյա սպասարկման ծառայություններից, ովքեր ունեն նման ծառայությունների մատուցման համար մյուս Պայմանավորվող կողմի պետության իրավասու իշխանությունների թույլտվությունը:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված իրավունքների իրականացումը ենթակա է միայն ֆիզիկական կամ գործառնական սահմանափակումների, որոնք սահմանվում են թռիչքների անվտանգության կամ ավիացիոն անվտանգության նպատակներով: Յուրաքանչյուր սահմանափակում կիրառվում է հավասարապես և ոչ պակաս բարենպաստ պայմաններով, քան միջազգային նմանատիպ օդային հաղորդակցության մեջ ներգրավված ցանկացած այլ ավիաընկերության նկատմամբ կիրառվող պայմաններն են սահմանափակումներ մտցնելու պահին:

Հոդված 19

Տարածայնությունների կարգավորում

1. Պայմանավորվող կողմերի միջև սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված՝ ցանկացած տարածայնություն առաջանալու դեպքում, բացառությամբ այն տարածայնությունների, որոնք առաջացել են 11-րդ (Թռիչքների անվտանգություն) և 12-րդ (Ավիացիոն անվտանգություն) հոդվածների շուրջ, Պայմանավորվող կողմերը առաջին հերթին ձգտում են դրանք կարգավորել խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

2. Եթե Պայմանավորվող կողմերին չի հաջողվում համաձայնության գալ բանակցությունների միջոցով, ապա վեճը, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի խնդրանքով, կարող է փոխանցվել արբիտրաժ՝ ստորև նշված ընթացակարգերին համապատասխան:

3. Վեճի արբիտրաժային քննությունը կատարվում է երեք միջնորդ դատավորների կազմով միջնորդ դատարանի կողմից. յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ նշանակում է մեկական միջնորդ դատավոր, իսկ այդպիսով նշանակված երկու միջնորդ դատավորները որոշում են երրորդին՝ պայմանով, որ երրորդ միջնորդ դատավորը չպետք է լինի որևէ Պայմանավորվող կողմի պետության քաղաքացի: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է նշանակի միջնորդ դատավորին 60 (վաթսուն) օրվա ընթացքում՝ հաշված այն օրվանից, երբ Պայմանավորվող կողմերից որևէ մեկը մյուս Պայմանավորվող կողմից դիվանագիտական ուղիներով ծանուցում է ստանում վեճի արբիտրաժային քննություն անցկացնելու խնդրանքով, և երրորդ միջնորդ դատավորը որոշվում է լրացուցիչ 60 (վաթսուն) օրվա ընթացքում: Եթե Պայմանավորվող կողմերից որևէ մեկը չի նշանակում իր դատավորին 60 (վաթսուն) օրվա ընթացքում, կամ եթե երրորդ միջնորդ դատավորը չի որոշվում վերը նշված ժամկետում, ապա յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է ԻԿԱՕ-ի խորհրդի նախագահին խնդրել նշանակել դատավոր կամ դատավորներ: Եթե նախագահը Պայմանավորվող կողմերից որևէ մեկի պետության քաղաքացի է, ապա փոխնախագահներից ավագը, ով այդ հիմքով չի ձանաչվում անիրավունակ, կատարում է նշանակումներ: Միջնորդ դատարանը եզրակացության է հանգում ձայների մեծամասնությամբ:

4. Միջնորդ դատարանը սահմանում է իր սեփական ընթացակարգը:

5. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ամբողջովին կատարում է միջնորդ դատարանի ցանկացած որոշում կամ վճիռ՝ այնքանով, որքանով այն համատեղելի է իր պետության ազգային օրենսդրության հետ:

6. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ինքն է հոգում իր նշանակած դատավորի գործունեության հետ կապված ծախսերը: Միջնորդ դատարանի այլ ծախսերը, ներառյալ ԻԿԱՕ-ի խորհրդի նախագահի՝ սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված ընթացակարգերի կատարման կապակցությամբ կատարած ծախսերը, Պայմանավորվող կողմերի միջև բաշխվում են հավասարապես:

7. Եթե և քանի դեռ Պայմանավորվող կողմերից մեկը չի կատարում սույն հոդվածի 3-րդ կետի համաձայն կայացված որոշումը, մյուս Պայմանավորվող կողմը կարող է սահմանափակել, կասեցնել կամ չեղարկել որոշումը չկատարած Պայմանավորվող կողմին կամ որոշումը չկատարած ավիաընկերությանը կամ ավիաընկերություններին իր կողմից սույն Համաձայնագրի ուժով տրամադրված ցանկացած իրավունք կամ արտոնություն:

Հոդված 20 **Խորհրդակցություններ և փոփոխություններ**

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է ցանկացած ժամանակ դիմել սույն Համաձայնագրի մեկնաբանման, կիրառման, իրականացման կամ փոփոխության կամ դրա դրույթների կատարման վերաբերյալ խորհրդակցություններ անցկացնելու խնդրանքով:

2. Նման խորհրդակցություններն սկսվում են այդպիսի դիմումը մյուս Պայմանավորվող կողմի ստանալու օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում, եթե Պայմանավորվող կողմերի միջև այլ բան համաձայնեցված չէ:

3. Սույն Համաձայնագրի փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են առանձին արձանագրություններով, որոնք կազմում են դրա անբաժանելի մասը և ուժի մեջ են մտնում Պայմանավորվող կողմերի կողմից այդ փոփոխությունների և լրացումների ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

4. Սույն Համաձայնագրի հավելվածի ցանկացած փոփոխություն կարող է կատարվել Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների համաձայնությամբ, և այն ուժի մեջ կմտնի դիվանագիտական ուղիներով հայտագրերի փոխանակումից հետո:

Հոդված 21 **Գրանցումը**

Սույն Համաձայնագիրը և դրա բոլոր փոփոխություններն ու լրացումները կգրանցվեն Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունում:

Հոդված 22 **Ուժի մեջ մտնելը**

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում Պայմանավորվող կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից 30 (երեսուն) օր հետո:

Հոդված 23 **Գործողության դադարեցումը**

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է ցանկացած ժամանակ մյուս Պայմանավորվող կողմին դիվանագիտական ուղիներով ծանուցել սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին: Նման ծանուցումը պետք է միաժամանակ փոխանցվի Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությանը:

2. Նման դեպքում սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցվում է այդպիսի ծանուցումը մյուս Պայմանավորվող կողմի ստանալու օրվանից 12 (տասներկու) ամիս հետո, եթե մինչև այդ ժամանակահատվածի ավարտը սույն Համաձայնագրի գործողության դադարեցման մասին նշված ծանուցումը հետ չի վերցվում Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Ծանուցումը մյուս Պայմանավորվող կողմի ստանալու հավաստման բացակայության դեպքում այն համարվում է ստացված ծանուցումը Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության ստանալուց 14 (տասնչորս) օր հետո:

Կատարված է Երևան քաղաքում 2017 թվականի հունիսի 14-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, տաջկերեն և ռուսերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ընթացքում տարաձայնություններ առաջանալու դեպքում գերակայում է ռուսերեն տեքստը:

**Հայաստանի Հանրապետության
Կառավարության կողմից՝**

**Տաջիկստանի Հանրապետության
Կառավարության կողմից՝**

Հավելված

**2017 թվականի հունիսի 14-ի՝ «Հայաստանի Հանրապետության
Կառավարության և Տաջիկստանի Հանրապետության
Կառավարության միջև օդային հաղորդակցության
մասին» համաձայնագրի**

1. Երթուղիներ, որոնք կշահագործվեն Հայաստանի Հանրապետության նշանակված ավիաընկերությունների կողմից՝ երկու ուղղությամբ.

Մեկնման կետեր	Միջանկյալ կետեր	Ժամանման կետեր	Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող կետեր
Կետեր Հայաստանի Հանրապետությունում	Կետեր Երրորդ երկրներում	Կետեր Տաջիկստանի Հանրապետությունում	Կետեր Երրորդ երկրներում

2. Երթուղիներ, որոնք կշահագործվեն Տաջիկստանի Հանրապետության նշանակված ավիաընկերությունների կողմից՝ երկու ուղղությամբ.

Մեկնման կետեր	Միջանկյալ կետեր	Ժամանման կետեր	Տաջիկստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող կետեր
Կետեր Տաջիկստանի Հանրապետությունում	Կետեր Երրորդ երկրներում	Կետեր Հայաստանի Հանրապետությունում	Կետեր Երրորդ երկրներում

3. Երկու ուղղություններով շահագործվող երթուղիների ավելացման հարցը երկու Պայմանավորվող կողմերի նշանակված ավիաընկերությունների միջև առանձին պայմանավորվածության առարկա է՝ Հայաստանի Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության ավիացիոն իշխանությունների համաձայնությամբ:

Նշումներ:

ա) Միջանկյալ կետերը և Պայմանավորվող կողմերի պետությունների տարածքից դուրս գտնվող կետերը կշահագործվեն երկու Պայմանավորվող կողմերի ավիաընկերությունների կողմից՝ առանց Երրորդ երկրներում գտնվող կետերի և մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում գտնվող կետերի միջև առևտրային իրավունքների իրականացման:

բ) Սի Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունների՝ մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում գտնվող կետերի և երրորդ երկրների տարածքում գտնվող կետերի միջև ուղևորներ, ուղեբեռ, բեռ և փոստ փոխադրելու իրավունքը (օդի 5-րդ ազատության իրավունքի իրականացում) Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների միջև առանձին համաձայնության առարկա է: